


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՒԹՅՈՒՆ
 Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ
 Եւրոպական կամ սր եւ է
 գրութիւն պէտք է ուղղել առ
 Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ ԴՐԱԳՐԻ
 ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳԻՐԻ ԿԱՆՆԻԿ
 ԵՎ ԹՂԹԱՊԱՐԻ ԺԱԽՔԸ
 ԽՈՒՔԱԳՐՈՒՔԵԱՆՈՎ ԳՐԱՅ Է :
 ԵՎԻՊՏՈՍԻ ՉԱՄՍԱՐ
 Տարեկան ողջ դահլիճ . 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐԻՐՆԵՐԻ
 Տարեկան ծրանիք 20
 Վեցամսեայ » 12

E. TOROSSIAN
 Rec.-propr. du journal arménien
 ARCHALOUYCE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԽՈՒՔԱԳՐՈՒՔԵԱՆՈՎ ՈՂՂՈՒՄ
 ԳՐՈՒՔԻՆԻՖ ԵՏ չ'ԵՆ ՏՐՈՒՅԻՐ
 ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
 Կանխիկ վճարելի են

ԱՐՇԱՆՈՅՍ
 ԻՐ ԲՆԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ
 1 Յունուար 1901

ՄԱՂՔԱՆՔ
 Առ սիրեցեալ բարեկամ
 Տիար Եղիշէ Թորոսեան
 Ի շնորհաւորութիւն Նոր Տարւոյ

Նոր Տարին բացաւ եւ ֆեզ առշարուն ,
 Նոր ժամ ու վայրկեան բերաւ ֆայցրայուն .
 Բայց հետք բերաւ նաեւ յիշատակ
 Առշարուն զաւկիդ ֆոյնի սիրունակ ,
 Որ նագիւ ֆեզի սարի լ'հիւր եղաւ ,
 եւ զերք հեռոյակ բաւ'ւ . վերագաւ'ւ :

Աստուած առաւ զայն , եւ չ'սար բնաւ .
 Թե բախեալ զեֆի պես աղցունի անբաւ .
 Առաջ հիւսնեցիր միտքաւ առաջ
 Թերք մը Առշարուն հաւանեալ զաւկիդ .
 Մարտի Առշարուն ֆոյ մեջ երկնիին
 Վայնի աննախ բաժակը կեանքին .
 եւ թերք յերկրի յիշատակ որդոյդ
 Ըզայ յարատեւ Ազգին բազմագոս :

ԲԱՂՁՐ . ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ
 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Նու պար Փաշայի յիշատակարանը որ
 Աղէքսանդրիոյ եկեղեցիին ձախ կողմի փոք-
 րիկ պարտեզին մէջն է , խորանի ձև ունի ,
 Եգիպտական ոճով երկու սիւներով : Յի-
 շատակարանին երկայնութիւնը 4 մէթր 50
 է , իսկ լայնութիւնը 3 մէթր 55 :

Յիշատակարանին խորը դրուած է Նու-
 պար Փաշայի մէկ գեղեցիկ արձանը ճեր-
 մակ մարմարիոնէ : Մեծ Դիւանագէտը թիկ-
 նախորդի մը վրայ նստած է , ձախ կողմը
 ունենալով արդարութեան կշիռ մը և ալ
 կողմը բազմաթիւ հատորներ թիկնախորդին
 կրթնցուած , որոնց մին բաց է և հետեւեալ
 արձանագրութիւնը կը կրէ . « Արդարու-
 թիւնը ամէն կառավարութեանց հիմն է » :

Այս գեղեցիկագիտական մեծ գործը կը
 պարտինք Բարեզգի համբաւաւոր քանդա-
 կագործ Տընի Բիւշի :

Յիշատակարանին միւս մասերը վար-
 դագոյն հատաքարէ են , որոնք սքանչե-
 լապէս կտրուած և յղկուած են Սկովտիոյ
 մէջ :

Խորանին ներքին ճակատամասը հետե-
 եալ արձանագրութիւնը կը կրէ . « Թո՛ղ

քու կամքդ ըլլայ , » իսկ արտաքին ճակա-
 տամասը՝

Ն Ո Ւ Պ Ա Ր Փ Ա Շ Ա
 1895-1899

Ինչպէս որ արդէն ծանուցած ենք ,
 յառաջիկայ Յունուար 1 ին բացման հան-
 դէսը պիտի կատարուի , որուն պիտի նա-
 խագահէ Եգիպտոսի Առաջնորդ Գեր . Այ-
 վազեան Եպիսկոպոս :

ԴԱՐԱՎԵՐՁԻԿ ՏԱՐԻ — ՆՈՐ ԴԱՐ — ՆՈՐ ՏԱՐԻ

ՏԻՈՒՐ ԱՅԼ ԻՐԱԿԱՆ
 ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Ժ.Թրդ . Դարու վերջին տարին փոթո-
 րիկներն առին հեռի տարին . . . : Յաւիտե-
 նականութեան անպարագրելի ու անյատակ
 ալեացը մէջ ազգերու ժամանակաւոր կեան-
 քին սահմանաւոր մէկ մասն ալ թաղուե-
 ցաւ : Խաղաղասիրական պատգամներով ,
 բարեմարտութեամբ բանաձևներով , լրագրական
 գովաբանութիւններով , դաղափարային վը-
 սեմ արտայայտութիւններով , մարդկային
 ազգին գիտական , բնախօսական , իմաս-
 տասիրական , առողջապահական , ճարտա-
 րարութեստական ու գեղեցիկարտական գոր-
 ծոց հսկայ թիւիներուն ապացոյցը տալու
 սարքուող արուեստահանդէսին խլացուցիչ
 լուրերով ու ծափերով ողջունուած՝ դա-
 րաւոր շրջանին , վերջնեկ զաւակը՝ Նոր-
 Դարու նախին տարւոյն անդրանիկ տարե-
 շրջանը անհասարութեան , անարդարու-
 թեան , հարստահարութեան , կեղծաւորու-
 թեան ու անպարկեշտութեան տեսանելի նկա-
 րագրերուն այլազան ու շօշափելի խառնուր-
 դովն յօրինուած ս'և յուսալիկ ճակտին
 կապած , գլորեցաւ կորստեան սարսուցուցիչ
 վիճին մէջ : 1900 ի տարելրումը՝ քայլ
 մըն ալ մօտեցուց անկեալ ու յոգնած
 մարդկութիւնը այն ահաւոր դահալէժին ,
 որոյ հիմերը մեր եսական ու փառասիրա-
 կան գոհնիկ զգացումներուն զարգացմա-
 ըը հաստատուեցան , և ուրկէ ամէն օր
 բոցախառն ծուխի հեղձուցիչ գոլորշիներ
 կը ժայթքեն . . . : Այս դժոխային ու
 սարսափելի հեռանկարին նստե կը թաքչի
 կեանքի կործանարար ոգին . . . որ՝ անվը-
 կանգօրէն կախարդած ու առեւանգած բա-
 նաւոր արարածներուն դատողութիւնն ու
 կամքը , գետնաքարչ կը տանի զանոնք դէպի
 կորստեան զարհուրելի անդունդը : Ոմանք
 կը խելագրուին մերթ իրենց այդ անզգայ

ու զրաւարար ընթացքին մէջ , և բուն-
 ճիգեր ընելէ վերջ , կը յաղտին յետա-
 դարձ ակնարկ մը նետել անցեալին վրայ ,
 կեանքին հոգեբանական հանգամանքն ու
 կարեւորութիւնը կարենալ ըմբռնելու գի-
 տաւորութեամբ :

Արեւին ոսկեհիւս ու յուսատու ճառա-
 գայթեմերուն՝ անտեսանելի թրթռուն շաղա-
 մաթներով կապուած՝ տեսլական հոգեւոյն կը
 շողովաւի պահ մը այդ յետսերեակի կատար-
 ուած շարժումէն : Ի՞նչ մտքի գերագոյն ան-
 դրադարձում , որոյ յուրքերն գերելեկտրա-
 կան , իրենց հիասքանչփողփողուններով յու-
 սագրական գեղատեսիլ երեսիլի մը կեր-
 պարանը կուտան մեր տրտմանուազ բնու-
 թեան : Եւ մինչ՝ այս հոգեկան պաղպղուն ,
 աննիւթ անդրադարձումներուն գգուող անուշ
 ազդեցութեան տակ , մռայլ համատարածին
 ծփփուն խորշումները , տխրեանից ծիրե-
 ըր ու խորհրդաւոր ստուերները , մտահա-
 յեցողութեամբ , կարծեա յեղակարծօրէն
 յեղաշրջուիլ . և հոգեւոյն տեսլականը՝ հո-
 գեստեղծին սիրակաթ սրտին ծալքերուն
 մէջ պճպճացող անհուն սիրոյ պարագծած
 յուսասփիւռ ու անեղր կամարին կապուիլ ,
 և բուն կեանքը ապրիլ կը ձգտին , ան-
 դէն՝ մարդը այս կործանարար ճամբուն
 մէջ առաջնորդող աշխարհային գձուձ ոգին ,
 մոլոր ու ստորին խորհուրդներէ ծագում
 առնելով՝ այժմ բացարձակապէս ամէն ու-
 ըրեք տիրապետող ճիւղաղտեսիլ եմը՝ ըս-
 պառնագին քալէ՛ կը պոռայ : Ապրուելու
 այս եղանակը մարդավայել ու բնական չէ .
 սակայն տե՛ս որ՝ մարդիկ , խոտան զգա-
 ցումներէ վարուած ըլլալով , մոռցեր են
 իրենց էութեան շարժառիթն ու իսկապիւ
 բնութիւնը , և տգեղ եմ ին կըքերը բու-
 ծանելով , չեն ուզեր հետեւիլ հեղահամ-
 բոյր Մարգարեալին տիպար , անստգիւտ
 օրինակին : Ահա այսօր , այդ ծանրօրէն
 ճնշող « քալէ՛ » ներուն հետ անգամ մըն ալ
 կծկուած կը տեսնենք կեանքի կծիկը . ա-
 րինով , արցունքով ու հանգուցներով
 հիւսուած կծիկը՝ որուն նուրը ու կարճ
 շարունակութիւնը , աւա՛ղ , մոխիրներու և
 աւերակներու մէջ կը սողոսկի . . . : Լաւ
 ուշադրութիւն ըրեք , սիրելի՛ ընթերցող-
 ներ , մեր շուրջը անցող դարձող բնական ,
 կախարդական ու արդեստական երևոյթնե-
 րուն , և հաւաստի եղէ՛ք թէ՛ կեանքի
 համբուած ճրագներէն մէկն ալ մարեցաւ ,
 քիչ մը ևս աւելցնելով մեր տառապանքն
 ու ցաւ : Սահող տարիներուն հետ շարու-
 նակաբար կը նուազին գոգցես գեղածիժաղ

ընտանիքի զգալի հրապոյնները : Երբեմն ակնհայտ ծաղիկներն հեշտաբոյր կերպարան մը ունին մեռելախաչ ու անթոյր ծառազարդ ու կանաչագեղ դարաստաններ՝ մեր վայելելու անկարող, և ծխաշունչ մթնոլորտի մը վարժուող բնաւորութեան առջև, ամայի երեւոյթ մը զգեցած են : Համեղ ու անուշակ պտուղները՝ որ մարդուս բնական քաղցրունակ ուտելիքն ըլլալու վկայութիւնը կ'ընձեռէին, Նոր-Տարւոյ դիւթիչ սեղանը երկնագեղ շքեղութեամբ զարդարելով, տարուէ տարի կը կորսնցընեն իրենց թանկագին յարգը, և հետեւաբար աւելի նուազ կը մշակուին մեր ընդարմացած ու դիւարժ քիմքին պատճառաւ : Կանաչազգեստ վարդենիներու շուքին տակէն խոխոլելով՝ մանուշակներն, քրքրումներն ու նարգէսներն համբուրող առուակները՝ այլևս չեն կրնար, իրենց հմայիչ ցոլքերով, գգուել պղծալի հեղուկներու յատակն յառող մեր բլշացած աչքերուն ակնարկները : Նոր-Տարին, խանձարուրի մէջ փաթթուած՝ բերկրութիւն առ թող մանկան մը պէս, անկեղծ սիրով ու համբոյններու տարափով ընդունուելու տեղ, ցքիով ցնդած մտքերու ցնորամիտ կատակերգութիւններովն, և մարդը թըշուառացնելու, խողտողելու համար՝ նոր միջոցներ գտնելու, ծուլակներ լարելու անարգ մտածումներովն կը հիւրընկալուին առ հասարակ : Բանտարին այս ողբալի վիճակը, որ համապարփակ անբարոյական մթնոլորտով մը շրջապատուած է, կը խորհրդանկարէ, իւր շրջանակին մէջ, գգուելու ուրուագծերով, ժամանակակից ազգերուն անպարկեշտ ֆաշիստական դրոշմներ, որ հաւաքական այլասեռ բարբերուն, կեղծ ու պատիր նկարագրերուն խտացումն է, և որուն վատ, լպիրշ դարձուածքներուն տակ կը հեծեն խղճալի, դատալիք ու անձնատուր ազգերը, կամ աւելի ճիշդը ըսելով, ընդհանուր մարդկութիւնը : Քաղաքականութիւնը՝ քիչ մը առաջ յիշատակուած միահեծան իշխող սոսկալի ու ահաւելի ու գիւն, հանրութեան տգեղ ԵՍ Ին շրթներէն կաթկթած բռնկող ու սպաննիչ քաղաքական թոյնն է, որ շանթարձակ ճայթմամբ քայքայեց ու կը քայքայէ անընդհատ, մեր անհատական կեանքն ու բարոյական նութիւնը, այսինքն համակ էութիւնը : Լաւագոյն ու ճշմարիտ կեանքին այս էական պայմաններուն խարխուլմը՝ չքայտումն է անհատական անհրաժեշտ պարտականութեան ու պատասխանատուութեան զգացումներուն, և որով այլասերումը հասած պիտի ըլլայ իր բարձրագոյն գաղաթնակէտին, որ անցեալին ու ներկային մէջ շատ մը գիւնադէտներէ, ներհուն անձնաւորութիւններէ նկատուած, և այդ դժնգակ վիճակին ակամայ մատնուած ժողովուրդներէն՝ սրտածմլիկ, արիւնաթաթաւ տեսարաններ յառաջ գալու մտահար կարելիութիւնը նախատեսուած է : Այժմու մատի վրայ համբուած քանի մը հեռատես բարոյախոսներուն արդար բողբոջ, անապատին մէջ վաղեմի անձնաւորութեան մը՝ փրկութեան միակ պայմանն ու միջոցը ազգարարող աղաղակին պէս՝ յաւետ անլսելի մնալու դատապարտուած է : Ըստ որում խըլացած են արիւնարբու, քաղցած քաղաքականութեան ականջները : Փառասիրական գծուձ ըզձանքներուն օր ըստ օրէ ծաւա-

լումը՝ պերճախօս մատնութիւնն է հասարակական բռնակալութեան անցնուն փթթումներուն, զոր կուզէ յաւիտեան քողարկել քաղաքականութիւնը քաղաքակրթութեան կեղծ դիմակին տակ :

Մարդկային ազգի բնածին ազնիւ բընաւորութիւնը կատարելապէս պոռնկացած է, որոյ ակներե ապացոյցն է տկարներուն շարունակ բռնաբարոյիւն ու կեղծութիւնը : Ահա՛ սե՛ ու համաճարակ ոգին դարավերջիկ մեռնող տարւոյն, զոր չէինք կրնար դուռաւորել, մեր թմրած ժողովուրդը յաւիտեանապէս քնացնելու դիտումով, ինչպէս կ'ընեն բազմախնդիր շահամոլները, և զորս՝ կըձանք թաղել այսօր անցեալին քանդուած փլատակներուն ներքեւ, և խեղճ ողորմելիներս, կը վազենք հեւ ի հեւ, համբուրելու նորածինը՝ որ պահուրտած մուկի ամպերուն ետեւ, կը դիտէ կարծես ապշութեամբ՝ գաղափարային այս անշէլ մոխրակոյտը, որոյ վրայ դողդոջելով բազմելու կուգայ :

Գահ չէ՛ այս, այլ մահ, որոյ խորափիտը կը խորունկցնէ յաճախ մեր տհաճ ու մոլի բնաւորութեան հատու բահը :

Նոր-Տարիներու երեւումը թէև միշտ վսեմ գաղափարներու զարթման պատճառեղած է, բայց քիչ անգամ իրականութիւն գտած են, տեսլական վերասլացիկ հոգիներու այդ բարենպատակ թռիչները, և յաճախ ասուպներու պէս մարած են, խաւ ի խաւ բարդուող կապարագոյն ամպերուն թաւ գրկին մէջ հեծեծագին . . . :

Հայ ժողովուրդը իր ներկայ դժնգակ կացութեամբ՝ տարածուն գաղափարներուն սպառնիչ ու վաւաշտ խառնարանէն դուրս ապրիլ չկրնար, թէև իր ջերմ փափաքն ըլլայ այդ : Փափաքը՝ հաւատքն կը ծնի, և « առանց գործի հաւատքը մեռած է » : Մենք՝ նորաստեղծ բարոյական մակարդակի մը կը կարօտինք, որ ունենայ հոգեկան երկինք մը պսպղուն, որոյ արշալոյսն իր վարդագեղ ու փափուկ մատներով գեղազարդէ զարթօնքի շողջողուն տեսարանները, մեր տեսողութեան սահմանաւոր այլ տեսլականօրէն, համայնաբար կամարին վրայ, նոր կեանք աւետելով մեզ, և որոյ բոցավառ վերջալոյսը՝ վառվառ տեսցրի մը ետեւ պլպլայ մշտայար . . . յուսոյ ձգողական շողերովն կապելով մեր կեանքը՝ յաւերժական կեանքին, առաւօտեան շուղաւոր Արուսեակին, որ երբեմն Արևելքէն մինչև Իսթլէհէ՛մ տարածուող երկինքը պայծառափայլ լուսավառեց՝ դարերէ ի վեր սպասուած փրկութեան բազմալի աւետիսը տալով աշխարհի, և որոյ մէջ սոսկ կը պարագրուի մեզ համար անծայրածիր ու անքննելի եղող խորհրդաւոր Յաւիտեանականութիւնը : Այս ազնիւ ու կենսաբեր նպատակը իրագործելու համար ոչ միայն փափաքելու, այլ անձնուիրաբար դործելու է, սիրելի՛ Հայ ժողովուրդ : Լաւ համոզուեցէք ու վստահ եղէք թէ՛ մայաւորական այս գեղեցկագոյն գաղափարականին թափ տալու միտումին պատճառաւ է որ՝ 1901 տարին, իր վարանոտ՝ այլ իրական երեւումով Արշալոյսին շարունակական ու հանդիսաւոր ծագումը այսօր դարձեալ՝ և աւելի ճառագայթարձակ լուսով մը կ'աւետէ մեզ, անոր համետ էջերուն մէջ, ժողովուրդին շրթունքներով :

Նոր-Դարու վերանորոգ տարին՝ զե-

փուռք իցիւ մեզ բերէին : Նորը՝ նուիրական անկեղծ հանգամանք մը պարտի ունենալ. ուստի, թօթափելով կեղծիքն ու պատրանքը, նորին հետ թո՛ղ նորագուին մարդիկ սրտաբուլիս ու սիրակաթ մազթանքներով : Հեռանանք ընդ միշտ խորխորատէն, և ազատիք ամենի ճիւղային շլատող ու սպաննող քաղաքական շինծու քաղաքակրթութեան ձեռքէն : Պարկեշտ, իրական ու անհրաժեշտ վերածնութեան մը բաղձացող փոքրաթիւ՝ այլ անկեղծ անձնաւորութիւններուն յարինք ու փարինք : Ատելութիւն, քինախնդրութիւն, կեղծաւորութիւն, չար նախանձ, անբարոյականութիւն ու սուտ վարդապետութիւններ այլ ևս թող չսերմանուին մեր մտաւորական գաշտին մէջ : Հոգին թող ճախրէ անընդհատ, հաւատքին անօրապեղ թեւերով գեպ նրբիմաց լաւագոյն գաղափարականը, որոյ վրայ երբէք չպիտի կրնայ ազգել բռնակալ մականը, եթէ մեր խղճի ճայնին հետ՝ հոգեկոտրութեան զարդարակցութեան դրուած կամբը, գերի չընենք մեր՝ այլասերելու հակամէտ, զգացումներուն : Ազգերու քաղաքական վարպետորդի շարժումներն ու մարդակործան դիտաւորութիւնները, ըլլալով տեսակ մը խանձ, թո՛ղ չզրգուեն մեր տուփոտ նախանձ : Խոնարհ ըլլանք մենք. մեր հաճոյքը ժողովրդական կեանքին բարեջրման մէջ փնտռենք, և վերջնականապէս մնա՛ք բարով լսելով փառասիրական ձգտումներուն՝ վտարենք մեր մէջէն եկամուտ խօլ ցնտումները, որ ակներե պատուհաններն են բարոյական պարզ ու մաքուր նկարագրին :

Ձարգանանք ու շարգանանք միշտ զիրար, բարոյականն ունենալով նպատակակէտ, որոյ կատարել իւրացումը առաջին պայմանն է կեանքի յարատեւ ու անեղծ պահպանման : Այս օրինակ գոյութեան մը եւեթ բաղձալու է Հայ ազգը, որոյ մինչ ցարդ կանգուն մնալը՝ արդէն նուիրական ու զարմանալի է :

Հետեւաբար, մաղթելով Հայ ժողովրդին, մնայուն՝ բարեբաւօտիկ կեանք ու յաջող ապագայ, խոնարհաբար կը յորդորեմ, խնամօք սնուցանելու, Նոր-Տարւոյն հետ, կեանքի էական նպատակին սրբազան ու նորաբողջ խորհրդօրդ, զոր անկողմնակալ ոգւով հրահրելու և զարգացնելու անկեղծ խոստմամբ թռիչ առնուլ կը փափաքի « Արշալոյս » լրագիրը : Համակրական զեղուն զգացմամբ Նոր-Տարի և Նոր-Կեանք կը շնորհաւորեմ Հայ ժողովուրդին և ժողովրդական Տպարանէն ծնող և թեւերն աւելի լայնարձակ ծաւալելու բարեմիտ ջանքերն ընող « Արշալոյս » րին :

Կ. Գ. ՈՒՋՈՒՆՅԱՆ

Գահիրէ, 9 Յունուար 1901

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ 11 ՅՈՒՆՈՒՍԻ 1901

2475	5165	5972	4477	553	118
419	800	1041	1899	2700	3433
3613	3684	4348	4399	4598	4873
5728	6319	6655	7114	8054	8300
		8667	9378	8673	

ՔՕՂԱՐԿԵԱԼ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մելիքեան ժառանգութիւնը» վերնա- գրով հատուած մը հանդիսեցաւ մեզ Այդ- տին փողոցի թերթին ՅԱՐԳ. թատրոն մէջ: Քանի՛ քանի առիթներու մէջ փորձով տեսնուեցաւ արդէն թէ՛ այդ թերթը իրեն բան գործ ըրած է ճշմարտութիւններ խեղճութիւրել, ստույգութիւններ պաշտպանել, ինքնագովութիւններ ընել և վերջապէս այս կարգին պատկանող միջոցներ ի գործ դնելով գոնէ քիչ մը հրաշքիլ և միանգամայն մի քանի պարզամտներ որսալ:

Բարեբաղդարար մեջ լրագրական հրապարակը միմիայն այդպիսեաց թողուած չէ և մենք յաճախ առիթը ունեցանք այդօրինակ փոքրիկ ծառայութիւններ մատուցանել մեր ժողովուրդին, անոնց ներկայացնելով այն դէմքերը, որոնք իրենց կեանքին մէջ Հայ ժողովրդի միակիտ դասակարգին սխալ դատարարութիւնէն միշտ օգտուել երազած են:

ՔՆՈՐՀԱՎԱԼԻՔ

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊԵՆԵԱՆ, ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ Ս. ՊԵՆԵԱՆ, ՕՐԻՈՐԻ Ճ. ՊԵՆԵԱՆ, ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ Ս. ԹԻՐԱՊԵԱՆ, ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ Ե. ՔԱՉԱՆՃԵԱՆ, ԱՅՐԻ ՏԻԿԻՆ Բ. ՔԵՐԼՍՓԷՃԵԱՆ ԵՒ ՈՐԻՒ, ՏԻՍՐ Պ. ԳՄԱՍԻՍԵԱՆ «Արշալոյս» միջոցաւ իրենց խորին շնորհակալութեամբ կը յայտնեն անոնց անոնց, որոնք բարեհաճեցան երէկ, ներկայ գտնուել:

ՏԻՍՐ ԵՐՈՒԱՆԴ ՊԵՆԵԱՆԻ

յուզարկուարութեան տխուր հանդիսին, և իրենց ցաւակցական զգացումը արտայայտել հանգուցելոյն սգակիր հօր, մօր, կողակցին, մօրեղբորդուին, ազգականաց և բարեկամաց:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Մ Ի Ր Ի Ա Մ Հ Ա Ր Ր Ի

ԵՆՄԷՆ: ՎԱՐԻԸ

- (Շարժ. նախորդ թիւէն և վերջ)
Եւ Եւաչիի սիրտը բարկութեամբ լեցուած, ցոտիկով վրանէն դուրս ելաւ:
Նա «Ուարտա»-ն գտաւ օրիորդներուն մէջտեղ բազմած:
—Ո՛վ դո՛ւ, որ կը ծաղկես, ինչպէս երկիրը ցօղին տակ: Կեսեւէ՛ ինձ մինչեւ տղրիւրը, կուզիմ քեզի խօսիլ:
Ուարտա կետեւեցաւ անոր:
—Աստուծի տեղ արշաւելու ատենս զքեզ տեսայ...
—Այո՛, ես ալ զքեզ տեսայ:
—Ուղտին վրայ կ'անցնէի, ինչպէս ծառաւի ճանապարհորդ մը անապատի մը մէջ: Ղուռն երկու հիւթեղ պտուղներու ա՛յն ծառն ես ուսկից կեանքը կը ծծնի:
—Տեսայ զքեզ:
—Ես ուղտովս կ'անցնէի, ինչպէս հիւանդ թագաւոր մը իր գահին վրայ: Անքունութիւնը սթափեցնող անուշահոտ պահներու տունկն էիք:
Տեսայ զքեզ:

ՊԱՏԵՐԱՉՄԻ ԴԱՇՏԷՆ

«Պատերազմը մեծ որսագութեամբ դէպի հարաւ կը յառաջանան» կ'ըսէ վերջին հետազոտող մը. ուրիշ հետազոտող մ'ալ կ'աւելցնէ թէ Կար արշաւող պատերազմը զեռ Տը Ուէթի յառաջապաններն են: Եթէ այս վերջին լուրը ստույգ է, ամենամեծ վտանգը կ'սպասուայ Անգղիոյ:

Պատերազմը այն բազմալուր վերջապէս կը նմանին, որուն զլուրը քանի կտրես, այնչափ աւելի զարթոյն, սպառնալից ու անարկու կը գտնուայ: Ս. Հեղինէի և Աէյրմի տքորավայրերը լեցուած են 18000 Պատերազմներով — սրբ ընտիր մասը կը կազմէին Պատերազմները — և սակայն զեռ թրանսպարտի և Օրանտի մէջ այնչափ քաջամարտիկ կռուողներ կան, չհաշուելով հազարաւոր Աֆրիքացիները, որք պատրաստ են այսուհետեւ զէն ի ձեռին մեռնելու իրենց Պատերազմներուն հետ:

Ինչպէս որ Լորտ Գիլքինսը կը հեռագրէր. «Բազմաթիւ Աֆրիքացիները զանազան պատրուակներով դէպի հիւսիս կ'երթան և կը միանան Պատերազմողաց հետ: Քարի Հոլանտացիները թրանսպարտի և Օրանտի անուանական կողմով ալ հասկցած են Անգլիական կռուականութեան ներդաժիտ միտումները, և հիմա բացորոշապէս կը տեսնեն իրենց ազատութեան պահպանման միակ միջոցը՝ այն է Պատերազմուն հետ միացումը:

Երկու ուրիշ Պատերազմներ՝ Օրանտի գետէն անցած են, արեւմտեան Գոմմանտուն երկու գլուղի բաժնուած է որոց մին Սուլթըն-էնտի ճամբով Մալմսպրիի վրայ կը քալէ. իսկ միւսը Պոֆօր-Ուէթի վրայ:

Արեւելեան կողմի արշաւախումբը Սթէյնպուրկ կը կեդրոնանայ Քրէտօքի վրայ քաղաք համար, որ Կար գաղութին ամենակարեւոր ռազմագիտական վայրերէն մէկն է:

Ասկից զատ Պատերազմը այնչափ մանր մունր ջոկատներու բաժնուած և Կարի զաղութին մէջ տարածուած են, որ իրենց յառաջխաղացութիւնը և ապստամբական շարժումը յաջողցնելու նպատակը արգիւելու համար, մեծկակ զօրաբանակի մը պէտքը կ'զգացուի: Այդ մեծկակ զօրաբանակը մինչեւ որ կ'ազմուի, արդէն Պատերազմը իրենց գերը կատարած պիտի ըլլան. առ այժմ թէև Անգլիացիք բաւական զօրեղ բանակներ ունին, բայց այնչափ քաղաքներու, այնչափ գիւղերու, այնչափ բերդերու, այնչափ պահպանողներու մէջ բաժնուած են, որ անոնց հեռացումը և կամ տկարացումը մեծ վրէպ է:

—Ուղտովս կ'անցնէի, ինչպէս նաւավար մը իր կուրին մէջ: Դու ջրին տակի բուստի թափանցիկ տունկն էիք, որուն երկու վարդազոյն կէտերուն մէջ սիրտս նաւաբեկեցաւ...:
«Հայրը ծիծաղեցաւ աղքատութեանս վրայ, Հարուստ պիտի ըլլամ: Կը մեկնիմ, պիտի վերադառնամ ան տեսնի, երբ իրեն համար ուղտեր և քեզի համար ալ մատանիներ ունենամ. պիտի սպասես ինձ:
—Այո՛, պիտի սպասեմ քեզ:
—Արշալուստիս ծաղիկը, ջուր տուր ինձ քու կարմիր ափովդ, որ խմեմ:
Նա դէպի աղբիւրը ծոցեւ և ձեռքը անոր երկարեց. Եւաչի ու՛մպ մը խմեց և յետոյ ըսաւ.
—Հիմակ ալ դուն խմէ՛ մեացածը:
Նա իր ձեռքը շրթներէն բերուն տարաւ, բայց կաթիլ մը սահեցաւ իր մատներուն մէջէն, և գլորեցաւ կամոց մը իր շրջազգեստին չիպկին մէջ:
Երբ այդ կաթիլը տեսաւ, բոլորովին սիրահարութենէ զղլտած պաղտաթի սկսաւ...:
—Կ'աղաչեմ քեզ, կ'աղաչեմ, ցոյց տո՛ւր ինձ այս թիւն կախուած բուստեայ մարգարիտը, որ մարմնոյդ գեղեցիկութեանը մէջ կը կուրսուի:
Աղջիկը իր գինթաքալը հանեց, Եւաչի զայն իր շրթանց մէջ տուաւ և կարծեց անհունութիւնը ճաշակել...:
Ս.յն ատեն, Պինչեւ սրտին խորը վրդովուած, իր սէրէն վշտահար, թողուց Ուարտան աղբիւրին քով և ինք մեկնեցաւ...:

անոնքներ կրնայ յառաջ բերել. որովհետեւ ամեն տեղ Պատերազմը արժուի աչքով պատրաստ կ'ուպտեն յարմար առիթը առիծի պէս խոյանալու համար անպաշտպան և կամ տկար մնացած կէտերուն վրայ:

Պատերազմը իրենց նպատակին հասնելու վրայ են, ինչ վայրէջութիւն, Եօհաննէսպուրկի, Պէտրոսի, Քրիստոսի և այլնի գրաւումը: Թրանսպարտի և կամ Օրանտը Եւրոպական երկիրներու պէս իրենց գլխաւոր քաղաքներուն և կամ մայրաքաղաքներուն գրաւումովը, իրենց ազատութիւնը չեն կորսնցնիր. Օրանտի նախագահը յաջորդաբար 10 քաղաք և կամ գիւղ իրեն մայրաքաղաքը հաշտեց, և այսօր՝ ունի գարձեալ իր Մայրաքաղաքը, նոյնպէս նաեւ Թրանսպարտը:

Քրիկէր ամեն պարագայի իր խօսքը պահեց. չէ՛ մի որ «Այստեղ պիտի զարմանայ» ըսեր էր և ո՛վ է այն մարդը որ այսօր հիացումը և սքանչացումը կ'արհեստ զսպել այդ արի և հին գիւցազներու արիւնը կրող փոքրիկ ժողովրդեան կողմէն վեր գլխաւորութեանը վրայ:

Ափրիկէի այդ Գաղթածին ժողովուրդը եւրոպայի թէ զինուորական և թէ մարտախրահան դասեր տուաւ: Պատերազմուն, այդ նախապես տակաւ և աստուածաշնչովս վարք ու բարքը պահող աղբին, մարդասիրակ սն զգացման ամեննէն վեհ ապացոյցը կը տեսնուի հասնելու պարագային մէջ որ կրնայ ըսուել թէ միակը եղած է մինչև հիմա իր տեսակին մէջ:

Ինչպէս որ գիտենք անցեալ տարի երբ Լէտիսիթի պաշարուած էր, և Պատերազմուն յաջողութիւնները իրենց գաղութնակէտը հասած էին, Թիւրքիւն անցնելու բազմաթիւ և ապարդիւն փորձերէ յետոյ, վարքը զարավարը վերջապէս կարողացաւ Արիս-Քօրը գրաւել նաւակամուրջով մը Թիւրքիւն անցնելէ յետոյ:

Անգլիացի Ուսկէյթ զօրավարը բուրբ կը գրաւէր և ժուպէր Սպարապետը, նոյն իրիկունը մասնաւոր հրահանգներ կուտայ զօրավար Պոթային — այժմու սպարապետը — սա կարուկ բառերով «պէտք է ետ առնել»:

Երկու ին երկու տարեկ Պոթայի հրամանատարութեան տակ Պատերազմը, ամեն կողմէ խուժեցին Արիս-Քօր և ստիպեցին Թօրնիքօթ գնդապետը — որ մահացու վիրաւորուել Ուսկէյթ զօրավարին յաջորդած էր — Արիս-Քօրը պարպելու և Թիւրքիւն կրկին ետ անցնելու:

Անգլիացիները սուկալի կորուստներ ունեցած էին, մօտաւորապէս 1500 հոգիի չափ, Պոթայի հետապնդումը արգիլած էր, բարձրագոյն

Գ.

Այդ օրէն ի վեր տարիներ սահած անցած էին: Լուսին գիշեր մ'էր և ցօղի առաջին հատիկները աստ անպ ցրուած լուսնի լոյսին տակ ցոլքեր կ'արձակէին լուսաշող անդադարձումներով: Վրանաբնակ պետ մը կարավանով մը վաչկատուն հասաւ: Այս մարդուն խոյր բերբը՝ խոր այտերը ու սպիացեալ ճակատը արկածախնդիր մ'ըլլալը կը վկայէին: Ոսկեայ հագուստներուն մէջ փաթեցուած էր: Եւ այն անուշահոտութիւնը որ կը կրեն նորաստակ ամուլները, իրմէ կը բուրբէին, ինչպէս խնկամանէ մը:

Չինուորական քայլով մը պետին վրանը մտաւ:

—Կը ճանչնաս, բուս նա Հիւսէյնին, կը ճանչնաս Եւաչի: Թոռի որդին, որուն աղքատութեանը և սիրոյն վրայ կը ծիծաղէիր անոնք:

Նա դրան կողմը քալեց, յանկարծ վարագոյրը մէկ կողմ ըրաւ և ձեռքի հպարտ շարժումով մը կարավանը յոյց տալով ըսաւ.

—Դուրս նայէ՛, տես ուղտերս, զամբիկներս և գրաստներս որոնք աւարին տակ կ'ընկծին, ո՛ւր է աղջիկդ...:

—Մեռա՛ւ...:

Վարագոյրը Եւաչիի ձեռքերէն սահեցաւ, նա դէպի տանիքին ձողին կրթեցաւ, և այս բաղիւնը այնքան սաստիկ եղաւ, որ բոլոր վրանը ցնցուեցաւ:

հրամանի մը համեմատ, եւ բլուրին կատարէն անմտունջ կը դիտէր Անգլիական բանակը, որ խառն ի խառն գետին վրայ ձգուած խարխուղ նաւակամուրջէն կ'անցնէր:

Պօէրները հրացաններն լեցուն կազմ ու պատրաստ երկիւղած լուրջեամբ իրենց պետին հրամանին կ'սպասէին. նահանջող անգլիացիներուն կեանքը իրենց ձեռքին մէջն էր: Նոյն պահուն Իտալացի կամուրաց պետը Ռիքթարտո գնդապետը որ իր գինեորականի ակնարկով անմիջապէս հասկցեր էր կացութիւնը, Պօթաին քովը կը փութայ քառասմբակ եւ կ'ըսէ:

—Չօրավարդ իմ, ինչո՞ւ հրաման չէք տար կրակ ընելու փախչողներուն վրայ:

Պօթա գնդապետին հարցման լուռ ու անխառն մնաց, բայց Իտալացիին կրկնելուն վերջայ չոր ու ցամաք կերպով «ո՛չ» պատասխանեց:

Գնդապետը դէմքը ծամածռելով իր տեղը գնաց, ինքզինքը ուտելով որ այսպիսի հիանալի առիթ մը ձեռքէ կը փախցուէր:

Հինգ վայրկեան յետոյ չորմանալով այս անխառն եւրոպեան վրայ, Գերման Հարիւրապետ Պէրկէնի ընկերակցութեամբ կրկին Պօէր գործավարին քովը գնաց եւ բարկացող չեղով մը Պօթաին ըսաւ:

—Բայց, զօրավարդ իմ, մեր ձեռքն է, հոս երկրորդ Աւստրիացի մը դարձնել:

Չօրավարին ետեւը երկու մարտից (12 թնդանօթ) կազմ ու պատրաստ հրամանի կ'ըսպասէին, միակ հրաման մը եւ իսկոյն թիւկէլայի գետը անգլիացիներուն արեամբը կը ներկուէր:

Բայց մարտասէր զօրավարը վայրկեանական լուրջեանք մը յետոյ, պատասխանեց:

—Բարձրագոյն հրամաններ ունիմ, սակէջ գատ ես եմ հոս հրամայողը:

Եւ անգլիացիները հետոսաբար գետին անցան, սխալեցին (°) եւ կարգապահ (°) նահանջով մը, ինչպէս որ գրեցին անգլիական թերթերը:

Իսկ Պօէրն սօսի գինադադարը...

Այս մարտախրոթեանց փոխարէն ի՞նչ ստացան Պօէրները... զէպքերը արդէն ցոյց տուին, նոյն իսկ Ձե՛ ժամուան գինադադար մը մերժուեցաւ իրենց յաղթական թշնամիներէն:

Վերջապէս ո՞վ պիտի յաղթէ:

Բնականաբար Անգլիան, եթէ կռիւէն վազ չ'անցնի. որովհետեւ Պօէրները իրենց բռնած բոլոր գետինները թող կուտան, որով գերի եղածները կրնան դարձեալ իրենց դէմ կոռել:

Իսկ Անգլիացիք բռնածնին Ս. Հեղինէ եւ կամ Սէյլան կը զրկեն, որով Հարաւային Ափրիկէի Հասարակապետութիւնները, ամէն օր մէկ քանի գերիներ տալով —ինչ որ բնական է— պիտի գայ օր մը որ բոլոր Պօէր գինեորակները ուրիշ տեղ տեղափոխուած պիտի ըլլան:

Սակայն եւ այնպէս Հարաւ-Ափրիկէի հողը զիս ծարաւի է Անգլիական երիտասարդութեան արեանը:

ԼԵՒՈՆ

ԿՐԿՆՈՒԹԻՒՆ ՍԸ

(Շարժ. նախորդ թիւէն եւ վերջ)

Փաշային վերոյիշեալ յայտարարութիւնը կարգադրող, վայրկեան մը չփոթութեան մէջ կ'իյնայ մտածելով թէ՛ արդեօք սա այն Սուլթան Համիտին է որ, պալատականներէն ամենէն ազդեցիկ մարդիկը ձեռք առնելով, բաւական զօրեղ կուսակցութիւն մը կազմելէ վերջ, իր հօրեղբայրը իրեն հայրենիքի գաւազան խեղդաման ընել տուաւ: Արդեօք սա ան սուլթանն է որ օսմանեան արիւնոտ գահին օրինաւոր ժառանգորդ է. զժառանգ սուլթան Մուրատը զրկեց երեք ամիս գահակալութենէ վերջ, գաղանային մոլեգնութեամբ սպառնալով կեանքին, եթէ չի հրժարի, որ տիրեց այն գահին՝ որ զպատրէն սասպարէզ պիտի ունենար իր կատարած՝ գազանային հաճոյքներուն գոհացում տալու համար: Արդեօք սա այն սուլթանն է, որ այս խոշոր ծրագիրները ամենայնջող կերպով գլուխ հանելէ վերջ, մէկիկ մէկիկ անհետացուց այն մարդիկը, որ իր արիւնոտ ձեռքերը լուրջու համար ջուր լեցուցած էին: Արդեօք սա այն Սուլթանն է որ քառորդ դարէ ի վեր, իր քակ թիկնորով մերթ այս սիրելի այն տէրութեան կողմը կը հակի ու անոնց քթին կը խնդայ: Եւ վերջապէս սա այն սուլթանն է որ արեան ծարաւի գազանային մոլեգնութեամբ, ամբողջ արգաւանդ երկիրներ մարդկային դիակներով ծածկեց արհամարելով եւրոպան, թէ՛ ուրիշ սուլթան համար մէ՛ սա: Մէկ վայրկեան մտածումը բաւական կ'ըլլայ խնդիրը շատ պարզօրէն տեսնելու, քանի որ թուրքը մեզք անձանօթ չ'է:

Թուրք մը. այդ թուրքը ըլլ'այ նոյն իսկ փաշայ մը, ո՛ր եւ է պարագայի մը, խօսակցութեան ժամանակ, երբ խնդիրը թուրք կառավարութեան քաղաքական մասին է. առանց քանի մը գոյներ ունենալու չէ՛ որ կը խօսի, երբ

քիչ մը խորհող կամ զգացումի տէր է, զի իրենց գոյութենէն ի վեր. պատմութիւնը անխարաբար իրենց երեսին կը նետէ սեւ աղա մը, որ ամբողջ մարտիրոսացեալ ժողովուրդներու թուրքերովը շինուած է: Ահա այդ աղա իրենց մէջ չեզոքացնելու համար, զանազան անձեր կը ցուցնեն իբր յանցաւոր ու հեղինակ եւ այդպէսով գերծ մնալ կը կարծեն:

Օսմանի եւ յաջորդներուն պատմութիւնը քիչ մը թղթատելով, հոն ուրիշ բան չենք գտնուիր բայց եթէ մարդկային դիակներու կոյտեր, ուր որ ոտք կոխած են՝ հոն արիւնը հոսած է. ազգեր ու ժողովուրդներ խեղդած են արեան լիւճերու մէջ: Սուլթան համիտ՝ իր նախորդներէն տարբեր բան մը ըրած չ'է. անոնց բացարձակ ըրածը այս գաղտնի ըրած է. իր նախորդները իրենք կ'անցնէին մոլեգնող ամբոխին գլուխը ու կը վարէին կոտորածներու եւ կողոպտանքներու հրամանատարութիւնը, իրենց ուզածնուն պէս անվախօրէն, իսկ սա Նըլտըղի բարձունքներէն, կը հրամայէ ու գործադրել կուտայ իրեն մեղսակից արքանակներու միջոցաւ:

Եթէ այս վիթուկին տեղ ուրիշ մը ըլլար. տարբեր չ'պիտի ըլլար իր վարմունքը դէպի հրպատակ ազգ մը, ու տարբեր չի պիտի ըլլայ նաեւ ասոնց ապագայ յաջորդներու ընթացքը: Այդ գահը արիւնով սկսած է՝ արիւնով պիտի վերջանայ, կամ ուրիշ խօսքով իր գոհներուն արեսնը մէջ պիտի խեղդուի:

Երբ փաշայ մը վերջին արիւնալի շըլանին պատասխանատուութիւնը՝ իր սիրելի վեհապետին չեզոքացնելու կ'աշխատի բողոքող փախստականի կեղծ հերոսութեամբ, թղթակիցներու միջոցաւ եւրոպան խարխուղ. այդ թղթակիցը ոչ չա՛հ մը ունի այնչափ թաքուն իրականութիւնը փնտրելուն մէջ, ոչ միջոցներ կամ առիթներ ունի մնալու դարմանելու նոյն իսկ եթէ ճշմարիտ մէկն է:

Իսկ մենք հայերս որ մեր անձին ու կաշիին վրայ սեւանք. կը տեսնենք ու կը լսենք սակաւին շատ թարմ մարտիրոս հայրենիքի օրհնական ճիշդը, սիրտ խնչացնող հեծկլտանքները, եւ տխուր իրականութիւնը իր ամբողջութեամբ եւ վիշաբ իր ահագնութեամբ գիտենք, չի տեսնելը կուրուքիւն, մեռելներու յատուկ կուրուքիւն է, մոռնալը վատութիւն, տեսնել՝ ու չ'տեսնել ուղիւր — ինչպէս կ'ընէ փաստաբան խմբագիրը — գաւազանութիւն է:

Աստուծոյ գլուխ չ'եղած յամաններուն հետ յիմարները կրնան ելլել...

Յ. ՀԱՆՏՍ

—Եկո՛ւր, ցոյց տո՛ւր ինձ իր գերեզմանը, ըսաւ Եաչի:

Երկուքն ալ դուրս ելան եւ իրարու ետեւէ կը քալէին լուռ ու մունջ: Անոնք ուղտերու շարքին մէջէն անցան. ուղտեր՝ որոնք ծնրադրած իրենց բեռնահաններուն կը պոռչտային: Հիւսէին, այս հարստութեանց վրայ կը ցաւէր:

Եաչի, ի տես իր իւրաքանչիւր կենդանւոյն, կը յիշէր անօգուտ դարձած վտանգ մը, ամեն մէկ նուէրը յոյսի մը մահը կ'արթնցնէր իրեն սրտին մէջ: Եւ խոշոր ու լայն հագուստները կը գլորէին իր ուսերուն վրայէն:

Անոնք հասան վերջապէս աւազակոյտի մը, ուր կոթող մը տնկուած էր:

—Ահա՛ «Ուարտա»ի գերեզմանը, ըսաւ Հիւսէյին, եւ մեկնեցաւ:

Եաչի գերեզմանին վրայ փոռեցաւ, եւ իր բազուկներով կոթողը գրկելով կ'ուրար:

Նա քարը կը շոյէր եւ հողը կը համբուրէր: Գերեզմանին վրայ, նա իր երկար եւ զուր ջանքերուն վրայ ողբաց: Եւ այդ միմիակութեան մէջ, գիշերային գիւրեղը, զէպի հեռուները կը տանէր սիրահարին հեծեծանքները: Յանկարծ ոտքի ելաւ եւ իր ետին ցցուեցաւ օրիորդ մը որ քղանցքէն կը քաշէր:

—Ո՞վ դու որ կը սիրես եւ կ'արտասուես, պարապ գերեզմանի մը վրայ կուրաս, վրանիս մէջ չեմ կրնար ննջել, քու հեծկլտանքներու ձայները քունս կը խանգարեն, իմ հօրս աղջիկը մեռած չէ: Անոր ըսին թէ դուն կոռուոյն մէջ

մեռած ես, եւ այս պատճառաւ զայն Աստուծի հետ ամուսնացուցին եւ մեկնեցան աստի, վասնզի Աստուծ քենէ կը վախնայ, եւ հայրս քու վերադարձէդ վախնալով, այս սուտ գերեզմանը կանգնեց որպէսզի քու ցաւիդ գոհացում տայ: «Ուարտա» Հարպի երկիրը կը բնակի շէճազի լեռանց մէջ:

Պէտտեւինը իր ամենէն արագ ուղտին վրայ խոյացաւ, եւ առանց նոյն իսկ իր մարդիկը արթնցնելու մեկնեցաւ:

Եւ հեռուէն աղջկանը պտոսաց.

—Աստուած ինձի սառապանք տուածին չափ, քեզ ցնծացնէ՛:

Նա տասն օր եւ տասն գիշեր ճամբորդեց արեգական ճնշման տակ, հովերու չարաչուք փշման դէմ, կրակէ ուղեկաններու եւ պազալթի (երկաթաքար) խարակներու մէջէն անցաւ. ջերմէն շունչը կ'սպասէր, ակունքներ իրար կը զարնուէին, շրթունքները կը ցամքէին եւ իր հին վերքերը վերստին կը բացուէին:

Վերջապէս նա Հարպի երկիրը հասաւ որ մեծ անապատին աւազակոյտին վրայ հիմնուած էր:

Նա Աստուծի վրանը մտաւ:

Կին մը հոն միայնակ րոք կը մանէր, «Ուարտայ»ն էր:

—Կ'աղաչեմ, ջուր տուր ինձ որ խմեմ, ըսաւ նա:

Միւսը ոտքի ելաւ եւ ուղտի կաթ բերաւ անոր: Ումպ մը խմեց եւ ամանը անոր տալով ըսաւ:

—Այժմ մնացածը գուն խմէ՛:

Նա անոր նայեցաւ:

Այն ատեն ճանչցաւ զայն, եւ գիրկը նետուեցաւ: Բայց նա գիշով մարդու մը նման հոս հոն կ'օրորուէր:

—Կը մեռնիմ, ըսաւ նա:

Նա անոր անկողին մը պատրաստեց, որուն վրայ փոռեցաւ Եաչի:

Ուարտա իր քովը նստաւ, Եաչի խելակորոյս կ'արտասուէր. ինչպէս ըրած էր պարապ գերեզմանին վրայ:

Վերջապէս հանդարտեցաւ, աչքերը բացաւ եւ Ուարտան իր մօտը տեսնելով, երջանիկ օրը յիշեց, եւ տղեկի մը նման խնդաց:

—Կը յիշե՞ս երբ ինձ ջուր տուիր քու ափիկովդ, եւ ձեռքիս մէջ մինչեւ վերջին կաթիլը խմել կեղծեց:

—Ըսէ՛, կը կրե՞ս միշտ այն բուստեայ վարագոյն գինիթաքարը որ քու մարմնսն գեղեցկութեան մէջ կը կրթուէր:

Նա ցոյց տուաւ զայն եւ շրթունքներուն տարաւ:

Եւ կամաց մը մատները կրթնցուց կոկորդին շուրջ կախուած կերպասին:

Իմ «Ենթէնի վարդ»ս, իմ խարտեայ բուրդներու վարդուկս, մրմնչեց նա:

Եւ իր գլուխը «Ուարտա»ի կուրծքին վրայ ինկաւ:

Նա մեռած էր...

Թարգմ. ՕՆՆԻԿ

Տպագրութիւն ԺԲԳՈՎԴԴԱԿԱՆ ՏՅԱՐԱՆԻ